600.0154.24.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2019 թվականի №154Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի №272Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2019 թվականի մայիսի 2-ին «ԷՐԷՄԻՐԷՆԵՐԺԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի №272Ա որոշմամբ ընկերությանը տրամադրված «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (արտադրության) ԼԷ №0552 լիցենզիայով (այսուհետ՝ №0552 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության տարբեր տարիների գրություններով ներկայացված տեղեկատվության՝ «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները գրեթե ավարտված են, կառուցված է կայանի շենքը և տեղադրված է գեներատորը,

գ) Ընկերությունը 5-րդ անգամ է №0552 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 18-ի №290Ա որոշմամբ «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (արտադրության) N0552 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 10 ամսով՝ մինչև 2019 թվականի մայիսի 27-ը,

ե) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է տեղական

էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը,

2) 35-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը,

զ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման նպատակներից է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը,

է) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 81-րդ կետի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվում է նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի՝ հաշվի առնելով լիցենզավորված անձի, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակազմի կողմից հիմնավորվող ժամկետը,

ը) №0552 լիցենզիայով ամրագրված «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը հայցվող 1 տարվա փոխարեն (առավելագույնը կարող է երկարաձգվել 10 ամսով) նպատակահարմար է երկարաձգել 9 ամսով, քանի որ դեռևս 2013 թվականի մարտից՝ «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիայի տրամադրման պահից մինչ օրս, շուրջ 6 տարի, ամբողջությամբ չեն ավարտվել կայանի կառուցման աշխատանքները, ինչի արդյունքում, ըստ էության, խախտվում է համապատասխան բնական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պահանջը (ընդ որում, նույն մոտեցումը ներկայումս կիրառվում է բոլոր լիցենզավորված անձանց նկատմամբ), և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ինն ամսով երկարաձգել №0552 լիցենզիայով ամրագրված «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2019 թվականի մայիսի 27-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի փետրվարի 27-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0552 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Տավուշ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 7-ի №652-8494 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ՀԲԵՆ18/153-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ գումարից 625,000 (վեց հարյուր քսանհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
24 մայիսի 2019թ.